# ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ նո 03

Ք.Գավառ

20.01.2016թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու, մի կողմից,Գավառի երկրագիտական թանգարանը ի դեմս տնօրեն՝ Բ. Հովեյանի, որը ղեկավարվում է ըստ իր կանոնադրությամբ , այսուհետ կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը՝Գավառի երկրագիտական թանգարանը Պատվիրատուի կողմից հատկացված ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի հատկացված միջոցների հաշվին տրվող /բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Սուբսիդիաներ ՊՈԱԿ-ներին,, հոդվածով/ 17781.8 հազ. ՀՀ դրամ գումարը հատկացնել սույն պահանջ կատարողին:

1.2 ,,Այլ ընթացիկ սուբսիդիաներ ,, հոդվածով ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշումով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին նախատեսված ,,ՀՀ պետական բյուջեի 08. 02. 02. 02,, ծրագրով հոդվածային վերաբաշխում կատարելու մասին հավելվածի հիմքով:

1.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը հատկացվում է ,,Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ կազմակերպելու համար ,, ըստ նպատակային օգտագործման հանձնարարականի:

1.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների և ծառայությունների արժեքը, ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

## 2 Հաշվետվությունը

2.1 Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ուսուցմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կատարողի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2 Կատարողը պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին գրավոր հաշվետվությունը պատվիրատուին ներկայացնել ամբողջական կատարման ժամկետի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

2.3 Պատվիրատուն քննարկում է սույն պայմանագրի 2.2 կետում նշված հաշվետվությունները և այդ կապակցությամբ համապատասխան որոշում է ընդունում դրանք ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն ծառայությունը համապատասխանում են սույն պայմանագրով նախատեսված ծառայություններին, ապա դրանք ընդունվում են:

2.4 Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը ընդունվելու դեպքում կատարողը այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է կատարողին: Սահմանված կարգով ծանուցում չտրամադրվելու դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:

2.5 Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը չընդունվելու դեպքում, կատարողը պարտավորվում է անվճար՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել կատարողի կողմից արձանագրված անհամապատասխանությունները: Եթե արձանագրված անհամապատասխանությունները հնարավոր չէ վերացնել, ապա կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

## 3 Նվիրաբերության տրամադրման պայմանները

3.1 Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետի նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայն վճարման ժամանակացույցի փոխանցում է կատարողին:

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը կատարողը տնօրինում է դրամաշնորհների գումարը գործող օրենքի համապատասխան:

3.3 Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները կատարողի կողմից պետք է կատարվեն մինչև 2016թ. դեկտեմբերի 25-ը:

## 4 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ֆորս-մաժոր/

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

## 5 Այլ դրույթներ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

5.4 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 6 Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | |
| Ք. Գավառ | ՀՎՀՀ 08400689 |
| ՀՎՀՀ 08404767 | ՀՀ 16021100052800 |
| ՀՀ 900171078505 | ՎՏԲ բանկ Կամո մ/ճ |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | |
| Ս.Խլղաթյան | Բ. Հովեյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

,,Գավառի երկրագիտական թանգարան.. ՊՈԱԿ-ին 2016թ. տրամադրվելիք գումարը աճողական կարգով:

Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների կազմակերպում

| N | Ամիսը | Գումարը( հազար դրամ )՝ աճողական |
|---|---|---|
| 1 | Հունվար | - |
| 2 | Փետրվար | 1780.0 |
| 3 | Մարտ | 3141.0 |
| 4 | Ապրիլ | 4596.0 |
| 5 | Մայիս | 6051.0 |
| 6 | Հունիս | 7504.9 |
| 7 | Հուլիս | 8959.9 |
| 8 | Օգոստոս | 10414.9 |
| 9 | Սեպտեմբեր | 11868.7 |
| 10 | Հոկտեմբեր | 13839.7 |
| 11 | Նոյեմբեր | 15810.7 |
| 12 | Դեկտեմբեր | 17781.8 |

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

ՀՀ ՖՆ Գործառ. վարչություն

ՀՎՀՀ 08404767 ՀՀ 900171078505

Աշխատակազմի ղեկավար՝

Ս.Խլղաթյան

Կ ա տ ա ր ո ղ

Գավառի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ

ՀՎՀՀ 08400689

ՀՀ 16021100052800

ԿՏԲ բանկ Կամո մ/ճ

Տնօրեն՝ Բ. Հովեյան